ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԽՈՍՈՎ

(ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ)

Սեպտեմբերի 9-ին Երևանում, Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի դահլիճում իրենց առաջին համաժողովին էին հավաքվել հանրապետության մայրաքաղաքի և շրջանների, Արցախի, ներքին սփյուռքի մտավորականության ավելի քան հազար ներկայացուցիչներ՝ գրականության, արվեստի, գիտության, հասարակական գործիչներ՝ քննարկելու Հայաստանում, Արցախում, Ադրբեջանի հարաշատ վայրերում, մասնավորապես Գետաշեն գյուղում և Շահումյանի շրջանում, ինչպես նաև Բաքվում ստեղծված պայթյունավտանգ իրադրությունը, որը հղի է առճակատման իրական սպառնալիքով: Այսօր Հայաստանն ու Արցախը, որ իբրև իրենց արդար պահանջատիրության կովանոցներ առաջ են քաշում պայքարի զուտ սահմանադրական, օրինական ձևեր, իրենք են հայտնվել հակասահմանադրական և հակաիրավական գործողությունների ոլորտում, շրջափակման մեջ, որն է՛լ ավելի է շիկացնում մթնոլորտը ռեգիոնում, ծանրացնում աղետալի երկրաշարժի հետևանքով տուժած Հայաստանի առանց այն էլ դժվարին կացությունը: Ուստի համաժողովը, իբրև առաջնահերթ նպատակներ, հռչակեց համայն հայության մտավորականների ջանքերի համախմբումն ու ներդաշնակումը, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդումը: Թեև համաժողովի նախաձեռնող խումբը հասկանալի պատճառներով ժամանակ չէր ունեցել հրավիրելու արտասահմանի հայ մտավորականության ներկայացուցիչների, սակայն որոշվեց սփյուռքի անվանի մի շարք գործիչների ընտրել համաժողովի ղեկավար մարմիններում: Կոչ արվեց անհապաղ հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որը պետք է քննարկի ռեգիոնում առաջացած բարդագույն իրավիճակը:

Բացելով համաժողովը, պատմական գիտությունների դոկտոր Լ. Խուրշուդյանը նշեց, որ հայ ժողովրդի պայքարի հաղթանակի գրավականը նրա բոլոր հատվածների միասնությունն է: Ստեղծված դրությունը նա բնորոշեց իբրև չհայտարարված պատերազմի վիճակ, Բաքվի մտավորականության ներկայացուցիչների դիմումը, դեպի Արցախ, այսպես կոչված, «խաղաղության երթ» կազմակերպելու միտքը, որը խմորվում է հարևան հանրապետությունում, որակեց իբրև պրովոկացիոն:

Ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ, Հայաստանի ԳԱ թղթակից-անդամ, ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր կուսակցության պատմության ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Հր. Սիմոնյանը: Քննության առնելով հայ ժողովրդի վերջին շուրջ մեկդարյա պատմության ճակատագրական էջերը, խճճված և մինչև օրս գիտական անաչառ ու ամբողջական գնահատության չարժանացած հանգուցահարցերը: Նա հանգամանորեն անդրադարձավ հատկապես Հայաստանի հանրապետության գոյության կարճատև ժամանակաշրջանին, Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդած իրադարձություններին, մաղր հայրենիքից Արցախն ու Նախիջևանը ապօրինաբար անջատելուն (մասնավորապես, նա խիստ քննադատության ենթարկեց 1921 թ. մարտի 16-ին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների բացակայությամբ, փակ դռների հետևում կնքված խորհրդա-թուրքական պայմանագիրը, որով Նախիջևանը հանձնվեց Ադրբեջանի ենթակայությանը): Զեկուցողը վերլուծեց ներկայումս ստեղծված բարդ իրադրությունը, կոչ արեց պայքարել հանուն հանրապետության լիիրավ ինքնուրույնության, լինել երկրում ծավալված համադեմոկրատական շարժման առաջին շարքերում:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամ Վ. Սիրադեղյանը ընթերցեց Հայոց համազգային շարժման ողջույնը հայ մտավորականների համաժողովին, կոմիտեի հայտարարությունը և հրապարակեց Արցախի ազգային խորհրդի նախագահ Վ. Գրիգորյանից ստացված նամակը:

Համաժողովը, որը, ի դեմս իր խորհրդի և նրա նախագահության, այսուհետև լինելու է մշտապես գործող մարմին, ընդունեց հռչակագրի (դեկլարացիա) նախագիծ, որտեղ շարադրված են արցախյան խնդրի էության և քաղաքական լուծման, Հայաստանի տնտեսական և քաղաքական ինքնուրույնության հասնելու, ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման, ազգային լեզվի ու մշակույթի զարգացման ուղիների վերաբերյալ ծրագրային հիմնադրույթներ:

Հռչակագրի նախագիծը, որը դրվելու է հասարակական քննարկման, Արցախի խնդիրը դիտում է իբրև դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին միջազգայնացված հայկական հարցի անբաժան մաս և պահանջում նրա նկատմամբ կիրառել միջազգային իրավունքի հանրահայտ քաղաքական ու իրավական նորմերն ու սկզբունքները, իբրև համամարդկային արժեք ճանաչված ազգերի ինքնորոշման իրավունքը: Վերջինիս ոտնահարման այնպիսի կոպիտ դրսևորումներով, ինչպիսիք են սումգայիթյան ցեղասպանությունը, բռնագավթումները, բռնագաղթը, ահաբեկումներն ու քաղաքական պիտակավորումները, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն «ագրեսիայի գործողություն» համարվող շրջափակումը, անկարելի է լուծել ազգամիջյան սուր պրոբլեմները:

Համաժողովում ելույթներ ունեցան և հռչակագրի նախագծում փոփոխություններ, լրացումներ մտցնելու առաջարկություններով հանդես եկան ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ, Հայաստանի Գերագույն խորհրդի դեպուտատներ, գրողներ, պատմաբաններ, արվեստագետներ, գիտնականներ, հոգևորական գործիչներ, ոչ ֆորմալ կազմակերպությունների ներկայացուցիչներ, նրանց թվում Բ. Դաղամյանը, Լ. Խուրշուդյանը, Հ. Հակոբյանը, Ռ. Դավոյանը, Ֆ. Սաֆարյանը, Ս. Մուրադյանը, Արցախի Հայոց թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոսը, Լ. Հախվերդյանը, Գր. Ավագյանը, Ս. Խանզադյանը, Ռ. Իշխանյանը, Լ. Հարությունյանը, Հ. Պողոսյանը և բազմաթիվ ուրիշներ:

Համաժողովում ելույթ ունեցավ և մասնակիցների հարցերին պատասխանեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Գալոյանը:

Սեպտեմբերի 10-ին հայ մտավորականների առաջին համաժողովը ավարտեց իր աշխատանքը:

«ԹԱԳՈՒՀԻՆ ՀԱՅՈՑ»-Ը ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Վերջերս Բեռլինի «Նոես Լեբեն» («Նոր կյանք») հրատարակչությունը լույս է ընծայել հայ անվանի գրող Սերո Խանզադյանի «Թագուհին հայոց» պատմավեպը, որը հայերեն հրատարակել է «Սովետական գրող» հրատարակչությունը 1978 թվականին:

Հրատարակությունն աչքի է ընկնում գեղեցիկ ձևավորմամբ, տպագրական բարձր կուլտուրայով: Գրքի թարգմանությունն իրականացրել է Ռուպրեխտ Վիլենովը: